

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2019 թ. նոյեմբերի 20-ին կայացած թիվ 3 նիստի**

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

Նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Գ. Գևորգյանը, Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ Ռ.Հ. Բարխուդարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը՝ դեկան, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, հաշվի առնելով, որ օրակարգում ներկայացված է դեկանի տարեկան հաշվետվության հարցը, առաջարկեց առաջադրել նախագահողի թեկնածություններ: Խորհրդի անդամների կողմից առաջադրվեց դեկանի տեղակալ, կ.գ.թ. Կ.Ա. Գրիգորյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

**Օրակարգ՝**

1. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Է.Ս. Գևորգյան):
2. Ընթացիկ հարցեր:

**ԼՍԵՅԻՆ.** Կենսաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2018-2019 թթ ընթացքում ֆակուլտետում կատարած աշխատանքների վերաբերյալ: Իր խոսքում Է.Ս. Գևորգյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոններում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները, անրադարձավ հրատարակված գիտական աշխատանքներին և այլն:

Ստորև ներկայացվում է Է.Ս. Գևորգյանի հաշվետվությունը:

**Հարգելի գործընկերներ.**

**1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ**

Նախ ուսանողների թվաքանակի մասին: Ներկայումս՝ 2019/20թթ ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետն ունի 485 սովորող. ընդ որում՝ առկա համակարգի բակալավրիատում՝ 323, մագիստրատուրայում՝ 87, հեռակա համակարգի բակալավրիատում 59 ուսանող, իսկ առկա և հեռակա ասպիրանտուրայում համապատասխանաբար 4 և 12 ասպիրանտներ /պատկեր 1/: Թեև այս տարվա ընդունելության արդյունքները բավական հուսադրող էին

/բացվեցին բոլոր երեք մասնագիտությունները/, բայց տեսնում ենք, որ սովորողների ընդհանուր թիվը անցյալ տարվա հետ համեմատած գրեթե չի փոխվել: Անցյալ տարվա թերի ընդունելության հետևանքները դեռևս երեք տարի էլ կզգանք: Համեմատելով ուսանողների այս թվաքանակը վերջին երեք ուստարիների թվաքանակի հետ (2018/19 ուստարում՝ 471, 2017/18թթ ուստարում՝ 526, 2016/17թթ ուստարում՝ 522, պատկեր 2) համոզվում ենք, որ վերջին տարիներին դիտվող համալսարան ընդունված ուսանողների թվաքանակի փոփոխությունները, ինչը ընդհանուր առմամբ նվազում է արձանագրում, համապատասխանաբար ազդում է նաև մեր ֆակուլտետ ընդունված ուսանողության ընդհանուր քանակի վրա /պատկեր 3/: Իրավիճակը, կարծեք թե բարելավվում է: Հուսով եմ, որ երեք ուստարիներից հետո կվերականգնենք ուսանողների մեր ֆակուլտետին բնորոշ թվաքանակը /520-550 ուսանող/: Անցյալ տարվա հաշվետվության մեջ էլ նշել եմ, որ սա վատ ցուցանիշ չէ, եթե հաշվի առնենք օբյեկտիվ դժվարությունները, որոնք առկա են հանրապետությունում դեմոգրաֆիկ իրադրության և բնագիտական մասնագիտությունների նկատմամբ, ընդհանուր առմամբ, հետաքրքրության նվազման առումով:

## 2. Ուսումնական աշխատանքներ

Ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով, առանց արտակարգ միջադեպերի, թեև բոլորս հիշում ենք համալսարանի ղեկավարման գործընթացներում զարնանային վայրիվերումները, պաշտոնատար անձանց, որոշ դեպքերում, չհիմնավորված փոփոխությունները, համալսարանի 100-ամյա հոբելյանի տոնակատարությունների շեմին ռեկտորատում առկա պրոբլեմները, որոնք մայիսի վերջին բերեցին ռեկտորի հրաժարականի և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստում ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրության: Ստեղծվեց ռեկտորատի ղեկավարման նոր կազմ, որը սեպտեմբերից ձեռնամուխ եղավ համալսարանի 100-ամյակի հանդիսությունների կազմակերպմանն ու իրականացմանը: Ուրախությամբ պիտի նշեմ, որ հանդիսություններն անցան պատշաճ մակարդակով, հանրապետության Վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, մեր ոլորտի նախարարի, 80-ից ավելի արտասահմանյան հյուրերի՝ համալսարանների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուրախությամբ պիտի նշեմ նաև, որ մեր ֆակուլտետի 46 // աշխատակիցներ արժանացան պարգևների՝ 1 պետական պարգևի /ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ/, 8 ԵՊՀ ոսկե և արծաթե մեդալների, 30 ԵՊՀ Պատվոգրերի և 7 ԵՊՀ հուշադրամի /պատկեր 4/:

Հաշվետու տարվա սեպտեմբերին ի մի բերվեցին ընդունելության վերջնական արդյունքները, որոնք, ինչպես նշեցի, լավատեսություն են ներշնչում: Նշեցի, որ ֆակուլտետի ուսանողների թվաքանակը մեծ չէ, սակայն առավել ցավալին նրանց մի սովոր հատվածի գիտելիքների չափազանց ցածր մակարդակն է: Այս առումով անցած ուստարին, ցավոք, չի տարբերվում նախորդներից: Հիմնական պատճառները երկուսն են /ինչպես սովորաբար նշում ենք՝ ուսանողների հանրակրթական ցածր մակարդակը և նրանց մեծ մասի պատշաճ գիտելիքներ ձեռքբերելու ցանկության բացակայությունը, մոտիվացման բացակայությունը:

Եթե առաջինի դեպքում մենք անգոր ենք փոխել իրավիճակը, ապա կարծում եմ, որ գիտելիք ձեռքբերելու ուսանողների ցանկության խթանումը, որոշ չափով, կախված է մեր աշխատանքում նորարարական մոտեցումների կիրառման,

ուսանողներին գիտակրթական տարաբնույթ հետաքրքիր միջոցառումների մեջ ներառման հետ: Թեև այս առումով տարբեր ամբիոնների ակտիվությունը նույնը չէ, երեք բաժինների բակալավրիատի ուսանողների առաջադիմությունը գրեթե նույնն է՝ 6.0-6.3% գերազանցիկներ և 3,1-6,3% հեռացվածներ /պատկեր 5/: Մագիստրատուրայում, իհարկե, գերազանցիկների թիվը չափազանց բարձր է թե՛ կենսաբանության և թե՛ կենսաքիմիայի բաժնում՝ 55,7% և 71,4%՝ համապատասխանաբար: Բերված թվերը, կարծես թե, վկայում են համապատասխան ամբիոնների անձնակազմերի գիտակրթական դրական գործունեության մասին, սակայն համաձայնեք, որ 75% գերազանցիկների առկայությունը իրատեսական չէ և վկայում է դասախոսների երբեմն չափից ավելի լիբերալ վերաբերմունքի մասին: Նույնիսկ նման պայմաններում, անցյալ ուստարում ֆակուլտետից տարբեր պատճառներով հեռացվել են 19 ուսանողներ /ֆակուլտետի ամբողջ ուսանողության 4,1%-ը/, այդ թվում՝ 17 բակալավրիատի առկա /13/ և հեռակա /4/ բաժիններից և 2 ուսանող մագիստրատուրայից:

Հաշվետու տարում շարունակվել է ֆակուլտետի դասախոսական անձնակազմի երիտասարդացման գործընթացը: Այն, ինչպես միշտ, ընթանում է սահուն, առանց ցնցումների: Կարող ենք արձանագրել, որ ներկայումս այս առումով մենք առանձնապես անհանգստանալու պատճառներ այլևս չունենք: Յոթ ամբիոնների վարիչների, երկու գիտակրթական կենտրոնների ղեկավարների մեծ մասը երիտասարդ և միջին տարիքի հայտնի մասնագետներ են, ավելանում է երիտասարդ դասախոսների քանակը: Տրամաբանական է, որ երիտասարդ ղեկավարների առկայությունն, իհարկե, նպաստելու է ֆակուլտետի դասախոսական և գիտական անձնակազմերի հետագա երիտասարդացմանը:

Ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների գիտակրթական գործունեության պատշաճ մակարդակի ապահովման գործին լծված է ֆակուլտետի ողջ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը: Այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ 3 ակադեմիկոս (որոնցից 2-ը՝ հրավիրված համատեղողներ են, ժամավճարային հիմունքներով դասավանդում են կենսաֆիզիկայի բաժնում) և 3 թղթակից անդամներ, գիտությունների 14 դոկտոր և ավելի քան 90 թեկնածուներ: Այս պատկանելի գիտակրթական հանրույթը ներկայացված է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներում՝ 7 ամբիոններում, ֆակուլտետում գործող «Կենսաբանության» ինստիտուտի 9 լաբորատորիաներում և 2 գիտակրթական կենտրոններում՝ «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում:

Գիտակրթական գործունեության բարելավմանը նպաստում է նաև միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը: Հաշվետու տարում հաջողությամբ շարունակվեց համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի, ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացումը մեր ֆակուլտետի վեց ամբիոններում՝ ղեղագործության հարակից թեմաների ուղղությամբ: Ուրախ ենք, որ այս երկուստեղ ձեռնտու համագործակցությունը շարունակվում է նաև ներկայում:

Մագիստրոսական կրթության բարելավման գործում կարևոր են համարում նաև մագիստրոսական ծրագրերի լրամշակման, նոր կրթական ծրագրերի առաջարկման գործընթացը: Հաշվետու տարում այդ ուղղությամբ նույնպես աշխատանքներ կատարվեցին: Մասնավորապես, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի կողմից մշակվեց ևս մեկ, նոր

մագիստրոսական ծրագիր՝ Կիրառական մանրէաբանությունը, որն արդեն հետաքրքրություն է առաջացնում ուսանողության շրջանում:

Հաշվետու տարում, որն ընդգրկում է 2018/19թթ ուստարվա երկրորդ կիսամյակը և 2019/20թթ ուստարվա առաջին կիսամյակը, ֆակուլտետում գործել են համապատասխանաբար 6 և 8 մագիստրոսական ծրագրեր /պատկեր 6/: Ներկայում բացված 8 ծրագրերից 3-ը գործում են Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում և Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում, ընդ որում մագիստրանտների թիվն առաջին կուրսում 26 է, երկրորդում՝ 17: Եվ սա պատահական չէ, քանի որ ամբիոնը և գիտակրթական այս կենտրոնն ապահովված են թե մեծաթիվ ակտիվ գործող մասնագետներով և թե անհրաժեշտ սարքավորումներով: Այս ուսումնական տարում ֆակուլտետի 7 ամբիոններից միայն կենդանաբանությանն ամբիոնում չի բացվել մագիստրոսական ծրագիր: Նկատի ունենալով ամբիոնում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ծավալը, աշխատակիցների ակտիվությունը հուսով ենք, որ հաջորդ ուստարում հարցը կկարգավորվի:

Կրթության պատշաճ որակի ապահովման գործում կարևոր է ինչպես մարդկային գործոնը, այնպես էլ ֆակուլտետի ուսումնաստեխնիկական բազան, արդի սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների առկայությունը: Ֆակուլտետում դրանց ձեռքբերման տարբեր աղբյուրներ կան. Դրանք են՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հատկացվող փոքրածավալ գումարը (տարեկան 1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԳՊԿ-ից բազային ֆինանսավորում ստացող Կենսաբանության գ/հ ինստիտուտի 9 գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական և այլ նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները /պատկեր 7/:

Նշված ֆինանսավորումը ամբիոններն ստանում են ՀՀ Գիտապետկոմի գիտական թեմաների, միջպետական, միջազգային կրթական կամ գիտական տարաբնույթ հիմնադրամներով ֆինանսավորվող նախագծերի իրականացման համար: Հաջորդ պատկերում բերված է ֆակուլտետի ամբիոններում նման թեմաների քանակը /պատկեր 8/: Բնական է, որքան շատ թեմաներ են իրականացվում ամբիոնում, այնքան էլ մեծ է լինում ֆինանսավորումը: Այստեղ նույնպես առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է /24 թեմա/: Առաջատարների թվում են նաև Կենդանաբանության /15/, Գենետիկայի և բջջաբանության /12/, Էկոլոգիայի և բնության պահպանության /8/ ամբիոնները: Հուսով ենք, որ մյուսներն էլ ապագայում կբարելավեն ցուցանիշները:

Հաջորդ պատկերում բերված է ՀՀ ԳՊԿ-ի կողմից թեմատիկ ֆինանսավորուման, ինչպես նաև երկկողմ և միջազգային դրամաշնորհներով ֆինանսավորումների ծավալն ամբիոններում /առանց Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ գործող լաբորատորիաների ֆինանսավորման/: Ուրախալի է, որ հաշվետու տարում ևս ֆակուլտետի շատ ամբիոններ արժանացել են տարաբնույթ միջազգային դրամաշնորհների, որոնց ֆինանսավորման մի մասն օգտագործվել է սարքավորումներ և ռեակտիվներ ձեռքբերելու համար: Հաշվետու տարում ֆակուլտետի ամբիոնների ընդհանուր ֆինանսավորումը բառացիորեն չի տարբերվում անցյալ տարվա ցուցանիշներից /պատկեր 9/: Այս տարում, ինչպես և անցյալ տարում, ունեցել են ընդհանուր առմամբ մոտ 170 մլն ՀՀ դրամ կամ մոտ 355 հազար ԱՄՆ դոլար արտաբյուջետային

ֆինանսավորում: Այս ֆինանսավորման առյուծի բաժինը /86%-ից ավելին/ պատկանում է 4 ամբիոնի, որոնց մեջ առավելագույն ֆինանսավորման արժանացել է Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնը /մոտ 115 մլն ԱՄՆ դոլար, կամ ընդհանուրի մոտ 33%-ը/: Բարվոք է վիճակը նաև կենդանաբանության, էկոլոգիայի և բնության պահպանության, Գենետիկայի և բջջաբանության, Կենսաֆիզիկայի ամբիոններում: Մտահոգիչ է հատկապես Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վիճակը. Հուսանք, որ մոտ ապագայում վիճակը կշտկվի: Բնական է, որ գիտակրթական միջազգային դրամաշնորհների ֆինանսավորման առկայությունը ֆակուլտետում, ՀՀ Գիտության պետական կոմիտեի բազային և թեմատիկ ֆինանսավորման հետ մեկտեղ, էապես նպաստում է նյութատեխնիկական բազայի համալրմանը, կրթական գործընթացների բարելավմանը ֆակուլտետում:

Ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակն ու վիճակը, ընդհանուր առմամբ, բավարար են և նպաստել են ուսումնական գործընթացների բարեհաջող անցկացմանը: Այնուամենայնիվ, այստեղ էլ ունենք թերացումներ: Մասնաշենքի վերջին հարկի սենյակների մի մասի վերանորոգումն ընթացավ շատ դանդաղ, իսկ դահլիճի վերանորոգումը, կարելի է ասել, դեռ շարունակվում է, արդեն կես տարուց ավելի: Դեռևս լրիվորեն լուծված չէ համակարգչային պրոյեկտորների լսարաններում տեղադրման հարցը, թեև երկու լսարանում տեղադրված հեռուստատեսային մոնիտորներն ակտիվ օգտագործվում են դասախոսությունների ժամանակ: Հաշվետու տարում սկսեց գործել կենդանաբանության ամբիոնի միջանցքում տեղադրված մոնիտորը, որն ամբիոնի վերաբերյալ գիտակրթական բնույթի տեղեկատվություն է ընձեռում: Ցանկալի կլինի ակտիվացնել այդ աշխատանքը՝ կենդանաբանության բնագավառի նորությունների գովազդման առումով:

Ինչպես միշտ, հաշվետու տարվա ընթացքում էլ, ուսումնական գործընթացների կազմակերպումը ֆակուլտետում պրոբլեմներ չի հարուցել շնորհիվ դեկանատի աշխատակիցների՝ դեկանի տեղակալներ Կարեն Ղազարյանի, Հենրիկ Մեմերջյանի, ֆակուլտետի խորհրդի գիտքարտուղար Իրեն Շահագիզյանի, ինչպես նաև Ռուզան Յորդանյանի և Մարջան Գևորգյանի պատասխանատու աշխատանքի, որոնց ես հայտնում եմ շնորհակալություն բարեխիղճ աշխատանքի համար: Ուսումնական գործընթացների բարելավման գործում որոշակի դեր ունեն նաև ֆակուլտետի կուրատոր-դասախոսները, ինչպես նաև մեր ուսանողները, ովքեր անանուն սոցիոլոգիական հարցումների ժամանակ, որոշ դեպքերում, բարձրացնում են կարևոր հարցեր: Ուսանողների բարձրացրած հարցերին, իհարկե, աշխատում ենք ականջալուր լինել:

Մեր ֆակուլտետի ուսումնական գործընթացներում մեծ է ուսումնական պրակտիկաների դերը: Հաշվետու տարում, ինչպես միշտ, դաշտային, փորձարարական և մանկավարժական պրակտիկաները, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով: Երկրորդ տարին է, ինչ փոխվել է դաշտային ուսումնական պրակտիկայի անցկացման վայրը: Չակնկալելով Հանքավանի հանգրվանի պայմանների բարելավում մոտ ապագայում կարծում եմ, որ ռեկտորատի որոշումն անցկացնել պրակտիկան համալսարանի Ծաղկաձորի հանգրվանում՝ զուգակցելով ուսանողների ավտոբուսային այցելությունները նաև Հանքավանի բազայի տարածք, ճիշտ էր և հնարավորինս նպաստում է պրակտիկայի բնականոն ընթացքին:

Ամենամյա նորոգման կարիք ունի համալսարանի տարածքում գտնվող ջերմոցը, որն օգտագործվում է ֆակուլտետի ամբիոնների կողմից ուսանողների

ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև աշխատակիցների գիտական թեմաների կատարման համար: Ինչպես նշում են վերջին տարիների հաշվետվություններում, այստեղ վերանորոգման աշխատանքներ տարվում են դեպքից դեպք, և դեռևս բավական գործ կա անելու: Հարցեր են կուտակվել նաև ֆակուլտետի մասնաշենքի տանիքի տարածքի մի մասում գտնվող կենդանիների բուծարանում: Թեև այն վերանորոգված է, սակայն չունի հնարավորություններ՝ հատուկ փորձասեղաններ և այլ պարագաներ, ինչը կապահովեր բուծարանի լիարժեք օգտագործումը: Հուսանք, որ տարիների ընթացքում բարձրացվող այս հարցերը կստանան դրական լուծում մոտ ապագայում:

### 3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ. Բոլորիս հայտնի է, որ ֆակուլտետի գիտահետազոտական գործունեությունը գրեթե ամբողջությամբ իրականացվում է ֆակուլտետում գործող “Կենսաբանության” գիտահետազոտական ինստիտուտի շրջանակներում: Ինստիտուտը, լինելով ներֆակուլտետային կառույց և անքակտելի կապերով միահյուսված լինելով ամբիոնների հետ, ֆակուլտետում իրականացվող ուսումնական գործընթացների հետ, ունենալով համատեղությամբ գործող մեծ թվով դասախոս-աշխատակիցներ և համատեղ օգտագործվող նյութատեխնիկական բազա, միևնույն ժամանակ բավական ինքնուրույն կառույց է իր տնօրինությամբ, Գիտական խորհրդով և իր յուրահատուկ գործառույթներով: Այնպես որ, ինչպես միշտ նշում են վերջին տարիների հաշվետվություններում, ֆակուլտետի գիտական աշխատանքների առավել մանրակրկիտ հաշվետվություն պետք է ակընկալել ինստիտուտի տնօրենի զեկույցում, ինչը, կարծում են կկայանա որոշ ժամանակ անց: Ես այսօր հպանցիկ կներկայացնեմ ֆակուլտետի գիտական գործունեության միայն որոշ, իմ կարծիքով առավել կարևոր և ընդհանրական պատկերը:

Նախ նշեմ, որ հաշվետու տարում, ինչպես վերջին տասնամյակի ընթացքում, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանի հատկապես հրատարակումների քանակության և նաև որակի առումով: Վերջին տարիներին այս տեսակետից ֆակուլտետն եղել է առաջատարը համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների մեջ (հրատարակումների ընդհանուր թվաքանակով վերջին 5 տարում միայն մեկ անգամ է զիջել ֆիզիկայի ֆակուլտետին): Հաշվետու տարին հրատարակումների ընդհանուր թվաքանակը (297) զգալիորեն գերազանցում է նախորդ տարիների ցուցանիշները /պատկեր 10/: Այստեղ կարևորը Հայաստանից դուրս հրատարակված գիտական հոդվածների թվի աճն է /մոտ կրկնակի նախորդ տարվա հետ համեմատած/: Եվ եթե նկատի ունենանք, որ դրանց մեծ մասը ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում են հրատարակված, ապա առաջխաղացումն ակնհայտ է:

Հաջորդ պատկերում տեսնում ենք տարբեր ամբիոնների ներդրումը /պատկեր 11/: Այստեղ էլ առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է՝ 86 հրատարակում, այնուհետև գալիս են կենսաֆիզիկայի (68), կենդանաբանության (45) ամբիոնները: Բնական է, որ հոդվածների գիտական մակարդակի որոշիչը հրատարակումն է միջազգային հեղինակավոր ամսագրերում: Այս առումով հարկ է նշել, որ վիճակը բարվոք է եթե նկատի ունենանք, որ հաշվետու տարում հոդվածների կեսից ավելին հենց այդպիսի ամսագրերում է տպագրված:

Բազմաթիվ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը, տարաբնույթ գիտակրթական համագործակցությունն իրականացվել են հիմնականում գիտական գործուղումների արդյունքում, որոնց ճնշող մեծամասնությունը (90%-ից ավելին) իրականացվել է արտաբյուջետային ֆինանսավորման հաշվին: Հաշվետու տարում մեր մասնագետները եղել են 89 արտասահմանյան գործուղումներում, 12-ը՝ երկարաժամկետ և 77-ը՝ կարճաժամկետ: Այստեղ, ինչպես և նախորդ տարիներին, առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է (գործուղումների ընդհանուր քանակի մոտ 45%-ը): Ուրախալի է, որ գործուղվել են նաև ուսանողներ /գործուղումների 8%-ը/, ասպիրանտներ, երիտասարդ գիտնականներ (գործուղումների ընդհանուր թվի 1/4-ից ավելի):

Ճակույտետի աշխատակիցների գիտական հաջողությունների մասին են վկայում նաև միջազգային գիտական համագործակցության շրջանակում վերջին տարիներին Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի, ինչպես նաև Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի մասնագետների Ռուսաստանի, Նիդեռլանդների, Գերմանիայի համապատասխան մասնագետների հետ համատեղ կազմակերպված միջազգային գիտաուսումնական լաբորատորիաները: Անշուշտ, նմանատիպ միջազգային գիտական կառույցները նպաստում են գիտական համագործակցությանը, փոխադարձ գործուղումներին, երիտասարդ մասնագետների գիտակրթական մակարդակի բարձրացմանը: Դրանք կարևոր են նաև գիտակրթական նոր ծրագրերի մշակման նպատակով: Համատեղ գործող միջազգային լաբորատորիաները կարևոր են նաև ամբիոնների նյութատեխնիկական բազայի հարստացման տեսակետից: Նախատեսվում է հաջորդ տարում մեր երեք ամբիոնների՝ գենետիկայի և բջջաբանության, կենդանաբանության, բուսաբանության և սնկաբանության ամբիոնների համագործակցությունը գերմանացի հայտնի գիտնական, մեր ֆակուլտետի երկարամյա բարեկամ դոկտոր Թոմաս Լիրի ղեկավարած գիտական լաբորատորիայի հետ: Նմանատիպ լաբորատորիաների աշխատանքների մասին առավել մանրակրկիտ տեղեկատվություն ակնկալում ենք Կենսաբանության գ/հ ինստիտուտի տնօրենի հաշվետվությունում:

Ի մի բերելով նշեմ, որ հաշվետու տարում շարունակվել են արտասահմանյան գիտնականների այցելությունները, գիտական զեկույցները, դասախոսությունները, ինչը վկայում է ֆակուլտետի, հատկապես Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, Գենետիկայի և բջջաբանության, Էկոլոգիայի և բնության պահպանության, Կենդանաբանության ամբիոնների մասնագետների միջազգային համագործակցության ասպարեզում առաջընթացի մասին: Գիտահետազոտական աշխատանքների առաջընթացին նպաստում են նաև մեր մասնագետների կողմից կազմակերպված գիտական միջոցառումները, գիտաժողովները: Դրա տիպիկ օրինակն էր «Կենսաքիմիայի, ճառագայթային և տիեզերական կենսաբանության արդի միտումները. Մեծ Միսակյանը և նրա հետազոտությունների կարևորությունը» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի մասնագետները /կազմկոմիտեի նախագահ՝ Կ.Ա.Թոչուևյան/ և որը նվիրված էր մեր համալսարանի 100-անյակին:

Գիտահետազոտական գործունեության առավել ամփոփ ներկայացում, ինչպես նշեցի, ակնկալում եմ «Կենսաբանության» գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի հաշվետվության մեջ:

#### 4. Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառներ

Հաշվետու տարում շարունակվել է ֆակուլտետի բնականոն գործունեությունը նաև այլ բնագավառներում: Ինչպես և վերջին տարիներին, դրական կարելի է համարել ֆակուլտետի Գիտխորհրդի (գիտքարտուղար՝ դոցենտ Իրեն Շահագիզյան), ֆակուլտետի Արհբյուրդի (նախագահ՝ դոցենտ Սեդա Մարության) գործունեությունը: Աշխատակիցները հնարավորություն են ունեցել իրենց հանգիստն անցկացնելու համալսարանի ծաղկաձորյան հանգրվանում՝ ձեռք բերելով զեղչ գներով ուղեգրեր:

Ֆակուլտետի ղեկանատն անմիջական կապի մեջ է եղել ֆակուլտետի Ուսանողական խորհրդի հետ, անհրաժեշտության դեպքերում օժանդակել խորհրդի նախաձեռնություններին՝ ուսանողական ցերեկայիններ, հավաքներ կազմակերպելու և այլ գործերում: Գտնում եմ, որ հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, թե Ուսխորհրդի, և թե ուսանողական գիտական ընկերության աշխատանքը դրական պիտի համարել:

Գիտք, որ վերջին տարիներին պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեության արդյունքների հիման վրա հավելավճարի հատկացման էապես նորացվող համակարգեր են կիրառվում: Հաշվետու տարում կիրառված համակարգն ունի առավելություններ նախորդ տարիներում կիրառվածից: Կարծում ենք, որ այն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի, և հուսով ենք, որ հաջորդ համակարգն ավելի օբյեկտիվ կլինի նախորդից, և տրամադրվելիք հավելավճարի չափն օբյեկտիվորեն կորոշվի այս կամ այն դասախոսի կամ գիտաշխատողի գործունեության արդյունավետությամբ:

Հաշվետու տարում շարունակվել է 2011 թվականի սեպտեմբերից սկսված ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա ծրագիրը: Մեր ֆակուլտետն ինչպես միշտ, այնպես էլ հաշվետու տարում, առաջատարների թվում է և ակտիվորեն ներգրավված է եղել այդ գործընթացներում:

#### 5. Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի կատարում

Հարգելի գործընկերներ, գիտք, որ հաշվետու տարում շարունակվել է ԵՊՀ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագիրը, որի շրջանակներում, բնականաբար, ուրվագծվել են նաև մեր ֆակուլտետի զարգացման հիմնական ուղիներն ու գործունեության գերակայությունները: Ավարտվել է ծրագրի չորրորդ տարին և կարող ենք հաշվետու լինել 2019 թվականի որոշ աշխատանքների կատարման առումով: Դրանց մի մասի վերաբերյալ ասվեց հաշվետվության մեջ: Ինչպես և նախորդ տարիներին, ցավոք, այս հաշվետու տարում ևս կան գործողություններ, որոնք չեն իրականացվել կամ կատարվել են թերացումներով: Ռազմավարական ծրագրի չիրականացված գործողությունների մի մասը պայմանավորված է համահամալսարանական խնդիրներով (համապատասխան նյութատեխնիկական և ֆինանսական միջոցների բացակայություն), մի մասն էլ մեր, ներֆակուլտետային բնույթ ունեն: Հուսով ենք, ռազմավարական ծրագրի գալիք վերջին տարվա ընթացքում, մնացած թերացումները կշտկվեն և մեկ տարի անց ամփոփ կներկայացվի ռազմավարական ծրագրի արդյունքներն ամբողջությամբ:

Թերևս այսքանը, այս տարի նույնպես զեկուցումս ծավալուն ստացվեց: Բանն այն է, որ քիչ չեն կատարված աշխատանքները, քիչ չեն նաև թերացումները: Ինչնիցե, պիտի նշեմ, որ ֆակուլտետում կատարված աշխատանքները ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ինստիտուտի, երկու համալսարանական գիտակրթական կենտրոնների գիտաշխատողների, ղեկանատի



և ընդհանրապես, ֆակուլտետի բոլոր աշխատակիցների և ուսանողության համատեղ, նպատակամղված գործունեության արդյունք են: Հայտնում եմ նրանց բոլորին իմ խորին շնորհակալությունը, հավաստիացնում, որ կենսաբանության ֆակուլտետը այսուհետև ևս կպահպանի իր բարձր վարկանիշը:

**Շնորհակալություն ուշադրության համար:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյանը:** Բարձր գնահատելով դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը, պրոֆ. Ռ.Մ. Հարությունյանը նշեց, որ ֆակուլտետում տիրում է բարի դրացիական, փոխադարձ հարգանքի և ջերմ մթնոլորտ: Ֆակուլտետի բոլոր դասախոսներին հաճելի է նման միջավայրում աշխատել, ինչը դեկանի՝ Է.Ս. Գևորգյանի բարեխիղճ ղեկավարման արդյունքն է:

Լրացնելով դեկանի այն միտքը, որ այս տարի կենսաբանության ֆակուլտետ ընդունվող ուսանողների թիվը զգալի ավելացել էր, պարոն Ռ.Մ. Հարությունյանը նշեց, որ նպատակահարմար կլինի ԵՊՀ-ի 100 -ամյակի շրջանակներում տպագրենք համալսարանական կյանքի, կրթական և գիտական գործունեության վերաբերյալ նյութերով մոտ 15 000 բուկլետներ և տարածենք ՀՀ-ի տարբեր մարզերի դպրոցականների շրջանում: Հետագայում նաև իրագործելով մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ՝ դպրոցականներին իրազեկել բուհում իրականացվող կրթական ծրագրերի, մասնագիտությունների և մասնագիտացումների մասին:

Ավարտելով խոսքը, պարոն Ռ.Մ. Հարությունյանն առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը:** Նա նշեց, որ լավ առիթ է խոսել ֆակուլտետում կատարվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին և ներկայացրեց որոշ կառուցողական հարցեր: Խոսվեց մասնագիտությունների անվանումների ցանկի ճշգրտելու, գիտաաշխատողների արդյունավետությունը գնահատելու հիմնական սկզբունքները և չափանիշները վերանայելու անհրաժեշտության մասին: Կարևորեց լսարանային ֆոնդի արդիականացման և տեխնիկական հագեցվածության հարցերը: Բարձրացրեց որոշ կազմակերպչական հարցեր կապված բուֆետի և հանդերձարանի վերաբացման հետ:

Պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը նշեց, որ ֆակուլտետում կատարվող աշխատանքները լավ են ընթանում և այս հարցում մեծ է դեկանի՝ պարոն Է.Ս. Գևորգյանի դերը և միանալով կոլեգաներին՝ առաջարկեց դրական գնահատել դեկանի կատարած աշխատանքը:

**ԵՊՀ կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը:** Նա իր ելույթում նշեց, որ 2018 թվականի հետ համեմատ այս տարի գրանցվել է ուսանողների թվի աճ: Նա անրադարձավ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի հագեցվածության մակարդակի բարձրացման հարցերին, պարզաբանեց, որ լաբորատորիաների վերանորոգման և վերազինման գործընթացը, գիտական փորձարարական բազայի հագեցվածությունը կնպաստեն գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետների պատրաստմանը:

Պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը նշեց, որ ամբիոնների գիտական գործունեությունը ընթանում է բնականոն ձևով և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության կազմակերպման գործում մեծ է ֆակուլտետի դեկան, պ-ն Է.Ս. Գևորգյանի դերը: Ավարտելով ելույթը Պ.Հ. Վարդևանյանն առաջարկեց դեկանի կատարած աշխատանքը ներկայացված ժամանակահատվածում գնահատել դրական:

Բարձրացված հարցերի մասին պարզաբանումներ ներկայացրեց ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ. Գևորգյանը և նշեց, որ առաջին անգամ է ելույթ ունենում որպես ռեկտոր: Պատասխանելով հարցերին նա անդրադարձավ ԵՊՀ-ին և ֆակուլտետին առնչվող որոշ խնդիրների լուսաբանմանը:

Գ. Գևորգյանը նշեց, որ այսօր անհրաժեշտություն է ժամանակակից տեխնիկայով, համապատասխան սարքավորումներով և նյութերով, նոր կահույքով, համակարգիչներով համալրված լաբորատորիաների և լսարանների ստեղծումը: Լաբորատորիաների այդպիսի հագեցվածությունը կնպաստի ուսումնագիտական աշխատանքների որակով իրականացմանը և կբարձրացնի ուսանողների փորձառությունը:

Մոտ ապագայում նախատեսվում է կազմակերպել ԵՊՀ-ում ուսուցանվող մասնագիտությունների ուղղությամբ Էքսպո-ցուցահանդեսներ և բաց դասեր ամրապնդելու Բուհ-դպրոց կապը, ինչը կնպաստի ԵՊՀ դիմորդների հոսքի մեծացմանը:

Գ. Գևորգյանը նշեց, որ բուֆետի և հանդերձարանի վերաբացման հետ կապված խնդիրներին կտրվեն համապատասխան լուծումներ: Խոսվեց նաև Դիլիջանի, Հանքավանի և Բյուրականի բազաների անբավարար վիճակի մասին և ներկայացվեցին նախնական շինարարական նախագծեր բազաները վերականգնելու համար: Նախատեսվում է վերականգնել Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարը, իսկ Բյուրականը վերագործել որպես հանգստյան տուն:

Ռեկտորը նշեց նաև, որ դեկտեմբերին ԵՊՀ- ի աշխատակիցները կստանան 13-րդ աշխատավարձ և 2020 թվականին հնարավորության սահմաններում կբարձրանա աշխատավարձը (10%), ինչը կիրագործվի ուսումնական վարձերի բարձրացման և կառուցվածքային փոփոխությունների արդյունքում:

Ավարտելով խոսքը Գ. Գևորգյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետում իրականացվել է մեծ ծավալի աշխատանք և դեկանի գործունեությունը կարելի է գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ֆակուլտետի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**ԼՍԵՑԻՆ.** Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆ. Ս.Գ.Նանագյուլյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակահատվածում կատարվել են պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնների կարծիքը՝ ատեստավորել հեռակա ուսուցման ասպիրանտներին.

Մարգարյան Անժելա (Գենետիկայի և բջջաբանության ամբիոն),  
Բոյաջյան Էմմա, Եսայան Տիգրան (Բուսաբանության և սնկաբանության ամբիոն),  
Արզումանյան Մերի (Կենդանաբանության ամբիոն),  
Եգորյան Հասմիկ (Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն),  
Մարգարյան Մարիամ, Պետրոսյան Գայանե, Մամիկոնյան Անահիտ, Այվազյան Իրինա,  
Մարգարյան Ռազմիկ (Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն):

**ՈՐՈՇԵՑԻՆ.** չատեստավորել գենետիկայի և բջջաբանության ամբիոնի հեռակա ասպիրանտ **Ալիկ Արմենի Անդրեասյանին** հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակահատվածում չի կատարվել պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնի կարծիքը:

**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Նարինե Սելբերտի Մնացականյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ.**

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Վերահաստատող ԵՊՀ Նարինե Սելբերտի Մնացականյանի թեկնածուական ատենախոսության Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. Կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ «Կոլոիդ արծաթի և նանոկոմպոզիտ ֆիլտրերի հակամանրէային ազդեցության հետազոտություն՝ էֆեկտները, թաղանթային մեխանիզմները և կիրառումը» թեման:

**ԼՍԵՑԻՆ.** կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողով ստեղծելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ.** կենսաբանության ֆակուլտետի դեկան Է.Ս. Գևորգյանը:


**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ստեղծել կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Հարությունյան Ռուբեն Միքայելի (նախագահ)՝ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ
2. Փարսադանյան Մարինա Աշոտի՝ ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ
3. Շահազիզյան Իրեն Վաչագանի՝ կենս. ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի ղոցենտ
4. Հունանյան Ստելլա Գագիկի՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ, կենսաբանություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝  
ղոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան